ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015

02.2015

03.2015
Մարտ

04.2015

05.2015

06.2015

07.2015

08.2015

09.2015

10.2015

11.2015

12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Մարտ

թիվ 3 (199)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները որոշ ՍՊԸ-ների արտարժույթի փոխանակման կետերի գործունեության և գրավատների կազմակերպման լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու, «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ի և որոշ ՍՊԸ-ների մասնաճյուղեր հաշվառելու, ինչպես նաև մի քանի ՍՊԸ-ների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի «Երևան» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ «Սիսիան» ներկայացուցչությունը գրանցումից հանելու և «Սիսիան» մասնաճյուղը գրանցելու, ինչպես նաև «Ջի Ընդ էյ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «Ամիրյան» մասնաճյուղը և «ԻՆԳՈ Արմենիա» ՓԲԸ-ի մի շարք ներկայացուցչություններ գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 գրավատների, 2 ԱՍՊԸ-ների և 1 ՓԲԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 5 արտարժույթի փոխանակման կետերի և 1 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 65Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 44-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 45-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

11 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 62-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

15 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Տիգտաթ» և «Զոլուշկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների արտարժույթի փոխանակման կետերի գործունեության և «Նոր Սազ», «Էլատո Գոլդ», «ԷնՋիէս Ֆինանս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների գրավատների կազմակերպման լիցենզիաները (որոշումներ թիվ 52Ա, 72Ա, 54Ա, 61Ա, 71Ա):
- ***Դադարեցվել է*** «ՖԻՆՔԱ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Երևան» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/135Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ունիվերսալ վարկային կազմակերպություն առևտրային կոոպերատիվի «Սիսիան» ներկայացուցչությունը և ***գրանցվել*** «Սիսիան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/169Ա):
- ***Գրանցվել են*** «Չի Ընդ էյ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ամիրյան» մասնաճյուղը և «ԻՆԳՈ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Իջևան», «Ավան», «Նոր Նորք-2», «Ապարան», «Էջմիածին», «Սևան», «Ախթալա», «Գյումրի», «Սիսիան», «Մեղրի» և «Վայք» ներկայացուցչությունները (որոշումներ թիվ 1/170Ա, 1/187Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 արտարժույթի փոխանակման կետերի, 2 գրավատների, 2 ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ, 1 փակ բաժնետիրական ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 8760000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/129Ա, 1/151Ա, 1/161Ա, 1/162Ա, 1/209Ա, 1/224Ա, 1/225Ա) և 5 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/150Ա, 1/152Ա, 1/171Ա, 1/195Ա, 1/212Ա, 1/194Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 65Ա որոշմամբ 2015 թ. մարտի 25-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 10.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 12.0%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 9.0%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից մակրոպրուդենցիալ գործիքների կիրառման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժթ» կետերով և 36-րդ հոդվածի 1-ին մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգ 2-ի 24-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում դրամով տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 2 տոկոսի չափով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24.1.1 կետով սահմանված դեպքերի:»:

2) Կանոնակարգ 2-ի 24.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24.1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից արտարժույթով, ինչպես նաև առարկայազուրկ մետաղական հաշիվներով (այսուհետ՝ մետաղական հաշիվ) ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 20 տոկոսի չափով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 24.1.2, 24.1.3 և 24.1.4 կետերով սահմանված դեպքերի: Արտարժույթով, ինչպես նաև մետաղական հաշիվներով ներգրավված միջոցների դիմաց պահուստավորումն ամբողջությամբ իրականացվում է Հայաստանի Հանրապետության դրամով:»:

3) Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 24.1.1, 24.1.2, 24.1.3 և 24.1.4 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«24.1.1. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.2 կամ 1.3 կետերի պահանջները բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 2-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 0 տոկոսի չափով:

24.1.2. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.1 և 1.2 կետերի պահանջները միաժամանակ բավարարող պարտատոմսերով արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 0 տոկոսի չափով:

24.1.3. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.1 և 1.3 կետերի պահանջները միաժամանակ կամ 1.2 կետի պահանջը բավարարող պարտատոմսերով և Հավելված 11-ի 2-րդ կետով սահմանված արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է սույն կանոնակարգի 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ չորրորդի չափով:

24.1.4. Սույն կանոնակարգի Հավելված 11-ի 1.3 կետի պահանջները բավարարող պարտատոմսերով արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պար-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. փետրվարի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.2015 թ. (ՀՀԳՏ N7 (519), 16.03.2015):

տադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է 24.1 կետով սահմանված դրույքաչափի մեկ երկրորդի չափով:»:

4) Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի 8-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

5) Կանոնակարգ 2-ի 53.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53.1. Եթե սույն կանոնակարգի 24.1.1-ից 24.1.4 կետերով սահմանված պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկվող ներգրավված միջոցները մարվում են մինչև դրանց մարմանը 2 տարի մնալը և (կամ) նույն կետերով սահմանված պարտատոմսերով իրականացվում է վաղաժամկետ մարում կամ հետգնում, ապա բանկն այդ ներգրավված միջոցների գծով իրականացնում է պահուստավորում հետևյալ կարգով.

1) Պահուստավորումն իրականացվում է այն ժամկետով, որի չափով ներգրավված միջոցը վաղաժամկետ մարմանը նախորդող 730 օրվա ընթացքում պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ընդգրկվել էր նվազեցված դրույքաչափով,

2) Պահուստավորման ենթակա գումարը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{Պահուստավորման ենթակա գումար} = \frac{\sum_{i=1}^{n} Ai * ri}{n}$$

որտեղ՝

n – սույն կետի 1-ին ենթակետում նշված ժամկետն է օրերով,

Ai – ներգրավված միջոցի i-րդ օրվա դրամային համարժեքն է,

ri – i-րդ օրվա համար սույն կանոնակարգի 24-րդ և 24.1 կետերով համապատասխանաբար ՀՀ դրամով և արտարժույթով ներգրավված միջոցների համար սահմանված դրույքաչափն է, իսկ եթե ներգրավված միջոցը պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ընդգրկվել է 0 տոկոս դրույքաչափով, ապա՝ 24-րդ և 24.1 կետերով սահմանված դրույքաչափերի 1.5-ապատիկը,

3) Պահուստավորումն իրականացվում է սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված գումարը պարտադիր պահուստավորման հաշվետու ժամանակահատվածներում Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների մեծությանը գումարելու միջոցով՝ սկսած վաղաժամկետ մարման օրվան հաջորդող օրվանից սույն կետի 1-ին ենթակետով սահմանված ժամկետի ընթացքում:»:

6) Կանոնակարգ 2-ի 53.4 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«53.4. Սույն կանոնակարգի 24.1.1-ից 24.1.4 կետերով սահմանված ներգրավված միջոցների նկատմամբ բանկը կարող է կիրառել սույն կանոնակարգի 24-րդ և 24.1 կետերով սահմանված դրույքաչափերը, որի դեպքում բանկի վրա չեն տարածվի սույն կանոնակարգի 53.1 կետով սահմանված պահանջները՝ ներգրավված միջոցների մասնակի կամ ամբողջական վաղաժամկետ մարման դեպքում:»:

7) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.6. Պահանջներ Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի խումբ կազմող Վերակառուցման և Զարգացման միջազգային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Ասիական զարգացման բանկի, Աֆրիկյան զարգացման բանկի, Միջամերիկյան զարգացման բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, Եվրոպական ներդրումային հիմնադրամի, Սկանդինավյան ներդրումային բանկի, Կարիբյան զարգացման բանկի, Իսլամական զարգացման բանկի, Առևտրի և զարգացման սևծովյան բանկի, ինչպես նաև Եվրոպական զարգացման բանկի խորհրդի նկատմամբ»:

8) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.20 և 6.21 կետերում «արտարժութային ակտիվների համար» սյունակում «վարկանիշ չունեցող 100» բառերը փոխարինել «վարկանիշ չունեցող 150» բառերով:

9) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ը լրացնել նոր 6.21.1 և 6.21.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

6.21.1. Կարճաժամկետ պահանջներ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/Ա-1+, Ա-1/Ֆ1+, Ֆ1/Պ-1/ /Ա-2/Ֆ2/Պ-2/ /Ա-3, Բ/Ֆ3, Բ/Պ-3/ /Բ-ից ցածր/Բ-ից ցածր/	20 50 100 150	/Ա-1+, Ա-1/Ֆ1+, Ֆ1/Պ-1/ /Ա-2/Ֆ2/Պ-2/ /Ա-3, Բ/Ֆ3, Բ/Պ-3/ /Բ-ից ցածր/Բ-ից ցածր/	20 50 100 150
6.21.2. Երկարաժամկետ պահանջներ ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ /ԲԲԲ+/Բաա1/-ից /Բ-/Բ3/ /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/	20 50 100 150	/ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ /Ա+/Ա1/-ից /Ա-/Ա3/ /ԲԲԲ+/Բաա1/-ից /Բ-/Բ3/ /(Բ-)-ից ցածր/(Բ3)-ից ցածր/	20 50 100 150

10) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 11-րդ կետի 2-րդ ենթակետի ողջ տեքստում «6.21-րդ» բառերը փոխարինել «6.21.2» բառերով:
11) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ը լրացնել նոր 37.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«37.1. Եթե ռեզիդենտ ոչ ֆինանսական կազմակերպությունը Մուդիզ վարկանշային գործակալության կողմից ստացել է ՆՊ կարճաժամկետ վարկանիշ, ապա տվյալ անձի նկատմամբ կարճաժամկետ պահանջը կշռելիս հիմք է ընդունվում երկարաժամկետ վարկանիշը, իսկ երկարաժամկետ վարկանիշ չունենալու դեպքում կիրառվում է 150 տոկոս ռիսկի կշիռ:»:

12) Կանոնակարգ 2-ի Հավելված 8-ի 2-րդ կետում «2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի 14-րդ կետի «ժա» ենթակետի» բառերը փոխարինել «2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկային գործունեության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության և թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգերը» կանոնակարգ 1-ի 33-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության» բառերով:
13) Կանոնակարգ 2-ի Հավելված 8-ի 23-րդ կետում «մեկ անձի» բառերը փոխարինել «բոլոր անձանց» բառերով:
14) Կանոնակարգ 2-ի Հավելված 11-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2. Սույն որոշմամբ փոփոխված և լրացված Կանոնակարգ 2-ի 24.1.1-ից 24.1.4 կետերով սահմանված ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում կարող են ընդգրկվել նվազեցված դրույքաչափով, եթե ապահովել են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2015 թվականի հունվարի 21-ի թիվ 6-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ և 3-րդ նախադասություններով սահմանված դրույթները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը՝ բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 8-րդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում ընդունման պահից 6 ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 մարտի 2015 թ., N 44-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 44-Ն որոշմամբ

«Հավելված 1
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված
«Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի

ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀՈՒՍՏԱՎՈՐՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԴՐՈՒՅՔԱՉԱՓՈՎ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից թողարկված պարտատոմսերով (պարտքային արժեթղթերով) ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված դրույքաչափով ընդգրկելու պայմաններ.

1.1. Բանկը տիրապետում է պարտատոմսերի սեփականատերերի վերաբերյալ արժանահավատ ու թարմացվող տեղեկատվության, որի համաձայն պարտատոմսերի շրջանառվող ծավալի առն-

վազն 50 տոկոսը պատկանում է բանկի բաժնետերերից և բանկի հետ կապված անձանցից տարբերվող այլ անձանց,

1.2. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68 Ն որոշմամբ հաստատված ,Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ով սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկաներում առևտրին, ընդ որում՝ թողարկվել են բանկի կողմից կամ թողարկման նպատակով ստեղծված կազմակերպության կողմից այդ կազմակերպության կողմից բանկին տրամադրված փոխառության ապահովությամբ, պարտատոմսերի տեղաբաշխման պահից մինչև մարում ընկած ժամկետը փոքր չէ 2 տարուց և պարտատոմսերի գծով մայր գումարի մասնակի մարումներ չեն նախատեսվում տեղաբաշխման օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում,

1.3. Պարտատոմսերը թույլատրվել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կարգավորվող շուկայում առևտրին և բավարարում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա. տեղաբաշխման պահից մինչև մարում ընկած ժամկետը փոքր չէ 2 տարուց,

բ. պարտատոմսը զեղչատոկոսային է կամ արժեկտրոնային ֆիքսված կամ լողացող տոկոսադրույքով, չի պարունակում մասնակի մարումներ կամ ժամկետից շուտ մարելու (հետ գնելու) որևէ օպցիոն,

գ. պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը, ինչպես նաև արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) տարբեր չեն,

դ. արժեկտրոնային տոկոսադրույքը հանդիսանում է անվանական տոկոսադրույք և բացասական մեծություն չէ,

ե. արժեկտրոնների վճարման ժամանակահատվածները կանոնավոր են, արժեկտրոնի վճարումն իրականացվում է տարեկան, կիսամյակային, եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ,

զ. օրերի հաշվարկման պայմանականությունը ընտրվում է հետևյալ տարբերակներից մեկով՝ փաստացի/365, փաստացի/փաստացի, փաստացի/360 կամ 30/360,

է. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի դեպքում հղման դրույքը բավարարում է հետևյալ պայմաններին՝ թափանցիկ, հրապարակված, անընդհատ, վստահելի և մատչելի շուկայի մասնակիցների համար,

ը. լողացող տոկոսադրույքով պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը և արժեկտրոնի հղման դրույքի օրերի հաշվարկման պայմանականությունը նույնն է,

թ. լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի սահմանման նպատակով հղման դրույքին գումարվող մեծությունը՝ հղման դրույքի մարժան (Reset Margin), հանդիսանում է հաստատուն անվանական մեծություն:

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի և օտարերկրյա բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի կողմից սույն կանոնակարգի Հավելված 3-ի Աղյուսակ 1-ի 6.6 կետով սահմանված կազմակերպություններից, Գերմանահայկական հիմնադրամից, Եվրասիական զարգացման բանկից, Նավթ Արտահանող Երկրների Կազմակերպության Միջազգային զարգացման հիմնադրամից (OPEC Fund for International Development), Հարավարևելյան Եվրոպայի Եվրոպական հիմնադրամից (European Fund for Southeast Europe), Արտասահմանյան Մասնավոր Ներդրումների կորպորացիայից (Overseas Private Investment Corporation), Կանաչը աճի համար հիմնադրամից (Green for Growth Fund), Զարգացման Եվրոպական Ֆինանսական Ինստիտուտների ասոցիացիայի (Association European Development Finance Institutions) անդամ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում ենթակա են նվազեցված դրույքաչափով ընդգրկման, եթե ներգրավված միջոցի մինչև մարում ընկած ժամկետը փոքր չէ երկու տարուց:»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով միջազգային շուկայում գործող ֆոնդային բորսաների անվանումները համապատասխանեցնել ներկայումս գործող անվանումներին,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերը, 5-րդ հոդվածի 1-ին մասը, 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերը, 2-րդ մասի 6-րդ կետը, 4-րդ, 5-րդ և 7-րդ մասերը, 8-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ, 8-րդ և 9-րդ մասերը, 9-րդ հոդվածի 4-րդ մասը, 10-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 17-րդ հոդվածը, 18-րդ հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածը, 23-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետը, 119-րդ հոդվածի 2-րդ մասը, 121-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը, 2-րդ և 3-րդ մասերը, 126-րդ հոդվածի 2-րդ մասը, 127-րդ հոդվածի 1-ին, 4-րդ 8-րդ և 10-րդ մասերը, 207-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ը հաստատելու մասին» թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի Հավելված 3-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
3 մարտի 2015 թ., N 45-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. փետրվարի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 11.03.2015 թ. (ՀՀԳՏ N7 (519), 16.03.2015):

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 45-Ն որոշմամբ

«Հավելված 3
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված
«Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԳՈՐԾՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՑԱՆԿ, ՈՐՈՆՑՈՒՄ ԱՌԵՎՏՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՎՐԱ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԱԶԴԱԳՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ

1. Ամերիկյան ֆոնդային բորսա (AMEX)
2. Ավստրալիայի ֆոնդային բորսա (ASX)
3. Ամստերդամի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
4. Բեռլինի ֆոնդային բորսա (AG)
5. Բեռնի բորսա (BX)
6. Բրյուսելի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
7. Իռլանդական ֆոնդային բորսա (ISE)
8. Լիսաբոնի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
9. Լյուքսեմբուրգի ֆոնդային բորսա
10. Լոնդոնի ֆոնդային բորսա (LSE)
11. Կորեայի ֆոնդային բորսա
12. Մադրիդի ֆոնդային բորսա
13. Իտալիայի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
14. Մոնրեալի բորսա
15. Մոսկովյան բորսա (ցուցակման 1-ին մակարդակ)
16. Նագոյայի ֆոնդային բորսա (NSE)
17. Նազդաք խմբում ընդգրկված ֆոնդային բորսաներ
18. Նյու Յորքի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
19. Նոր Զելանդիայի բորսա
20. Պրահայի ֆոնդային բորսա (PSE)
21. Ճապոնիայի բորսաների խումբ (Japan Exchange Group.)
22. Վարշավայի ֆոնդային բորսա (WSE)
23. Վիեննայի ֆոնդային բորսա
24. Տոկիոյի ֆոնդային բորսա (TSE)
25. Տորոնտոյի ֆոնդային բորսա (TSX)
26. Շվեյցարիայի ֆոնդային բորսա (SIX Swiss Exchange)
27. Փարիզի ֆոնդային բորսա (Euronext-NYSE)
28. Օսակայի ֆոնդային բորսա (OSE)
29. Օսլոյի ֆոնդային բորսա (OMX)
30. Ֆրանկֆուրտի ֆոնդային բորսա (FWB)»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի թիվ 50-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով բանկերից ստացվող հաշվետվությունը համապատասխանեցնել նորմատիվային դաշտի փոփոխություններին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 55-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իա» կետերով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի ««Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3-ի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Թիվ 4 հաշվետվությունը բաղկացած է երկու էջից:

Հաշվետվության 1-ին էջում ներկայացվում են բոլոր արժույթներով ներգրավված միջոցները (անվանական գումարների (մայր գումարների) մնացորդները) դրամական արտահայտությամբ, հազար դրամներով՝ առանց տասնորդական միավորների: Ներգրավված միջոցների խմբավորումը կատարվում է ըստ հետևյալ խմբերի՝ «ՀՀ դրամ», «ԱՄՆ դոլար», «Եվրո» և «Այլ արտարժույթ»: Հաշվետվության 1-ին էջի 2-ից 29-րդ սյունակների տողերում ներկայացվում է պարտադիր պահուստավորման ենթակա ներգրավված միջոցների հաշվարկը: Ընդ որում՝ 2-ից 13-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24-րդ և 24.1 կետերով սահմանված ներգրավված միջոցները, իսկ 14-ից 17-րդ, 18-ից 21-րդ, 22-ից 25-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի համապատասխանաբար 24.1.1 և 24.1.2, 24.1.3, 24.1.4 կետերով սահմանված ներգրավված միջոցները՝ ըստ արժույթների: 30-ից 33-րդ սյունակների տողերում լրացվում են Կանոնակարգ 2-ի 53.1-րդ կետով սահմանված կարգով վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները՝ ըստ արժույթների: 34-րդ, 35-րդ և 36-րդ սյունակների տողերում ներկայացվում է փաստացի պահուստավորված միջոցների հաշվարկը: Ընդ որում, 34-րդ, 35-րդ և 36-րդ սյունակների տողերը լրացնելիս հիմք են ընդունվում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված հաշվետու բանկի թղթակցային հաշիվների տվյալ օրվա մնացորդն արտացոլող քաղվածքները: 37-ից 40-րդ սյունակների տողերում ներկայացվում են հաշվետու բանկի կողմից ներգրավված այն միջոցները, որոնք, համաձայն Կանոնակարգ 2-ի 53-րդ կետի 7-րդ ենթակետի, ենթակա չեն պարտադիր պահուստավորման:

Հաշվետվության 2-րդ էջը լրացվում է այն դեպքում, երբ 1-ին էջի 14-ից 25-րդ սյունակներից որևէ մեկում լրացված են տվյալներ: 2-րդ էջում լրացվում են Կանոնակարգ 2-ի 24.1.1-ից 24.1.4 կետերով սահմանված ներգրավված միջոցների վերաբերյալ տվյալները: 1-ին սյունակում լրացվում են ներգրավված միջոցի պայմանագրի, պարտատոմսերի թողարկման համարը կամ որևէ այլ տվյալ, որը կիրառվում է բանկի կողմից տվյալ ներգրավված միջոցի նույնականացման համար: 2-րդ սյունակում լրացվում է փոխատուի լրիվ անվանումը, իսկ պարտատոմսերով ներգրավված միջոցների դեպքում չի լրացվում: Ներգրավված միջոցը, մեկից ավելի անձանց կողմից ֆինանսավորված լինելու դեպքում, հաշվետվության մեջ ներկայացվում է առանձին տողերում, իսկ գումարները բաշխվում են ֆինանսավորման մասնաբաժինների համամասնությամբ: 3-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի տեսակը, մասնավորապես՝ «վարկ», «վերականգնվող վարկային գիծ», «չվերականգնվող վարկային գիծ», «այլ վարկային գիծ», «ավանդ», «երկարաժամկետ ստորադաս փոխառություն», «փոխառություն», «տոկոսային պարտատոմս», «ոչ տոկոսային պարտատոմս» կամ «այլ»: 4-ից 6-րդ սյունակ-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. մարտի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 23.03.2015 թ. (ՀՀԳՏ N8 (520), 1.04.2015):

ները լրացվում են 11-րդ սյունակում լրացված ամսաթվի դրությամբ, դրամական արտահայտությամբ, հազար դրամներով: 7-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի արժույթի ISO կոդը: 8-րդ սյունակում լրացվում է ներգրավված միջոցի պայմանագրով մարման ամսաթիվը, իսկ մասնակի մարումներ նախատեսված լինելու դեպքում՝ առաջիկա մարման ամսաթիվը: 10-րդ և 11-րդ սյունակներում լրացվում են պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ներգրավված միջոցի՝ նվազեցված դրույքաչափով ընդգրկվելու ժամանակահատվածի սկզբի և ավարտի ամսաթվերը:»:

2) Կանոնակարգ 3-ի ՁԼ թիվ 4 հաշվետվությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելվածի 1-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
17 մարտի 2015 թ., N 62-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի մարտի 12-ի թիվ 62-Ն որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում պարտադիր պահուստավորման նորմատիվի վերաբերյալ

ՁԼ թիվ 4

Բանկի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից մինչև* _____ *թ.*

Ինվեստոր	Ռեզիդենտներից ներգրավված միջոցներ				Ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցներ								0% դրույքաչափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ամբողջական դրույքաչափի մեկ չորրորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ			
					Ընդամենը				Այդ թվում՝ ոչ ռեզիդենտ բանկերից											
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
																	x			
Միջինը	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	x	-	-	-
Ենթակա է պահուստավորման	-	-	-	-	-	-	-	-	x	x	x	x	x	x	x	x	x	-	-	-

(հազար դրամ)

Ամբողջական դրույքաչափի մեկ երկրորդի չափով պահուստավորման ենթակա ներգրավված միջոցներ				Ընդամենը ներգրավված միջոցներ				Վաղաժամկետ մարված միջոցների գծով պահուստավորման ենթակա գումարները				Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում բղթակցային հաշվի մնացորդը			Երկարաժամկետ ստորադաս փոխառություններ, որոնք ենթակա չեն պարտադիր պահուստավորման, բացառությամբ ԿԲ-ից ներգրավված երկարաժամկետ ստորադաս փոխառությունների			
ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ արտարժույթ
22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x				-	-	-	-											
x	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
x	-	-	-	-	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x	x

Պարտադիր պահուստավորման նորմատիվի հաշվարկում նվազեցված (զրոյական) դրույքաչափով ընդգրկվող ներգրավված միջոցներ

(հազար դրամ)

Ներգրավված միջոցի մնացորդային ժամկետայնության ներքին կլոր համարը	Պահուստավորման ենթակա միջոցների մնացորդը	Ներգրավված միջոցների մնացորդի գծով պահուստավորման գումարը (սահմանաչափը)	Ներգրավված միջոցների մնացորդի գծով պահուստավորման ենթակա միջոցների (գործարքի) ծավալը	Տոկոսադրույքի կամ իրացվելիության հարաբերակցության նկատմամբ կիրառվող գումարը	Վերջը	Սկսած ժամկետը	Պահուստավորվող ենթակա	Ցածր (զրոյական) դրույքաչափով ընդգրկման ժամանակահատվածը	
								Սկիզբ	Ավարտ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

Բանկի վարչության նախագահ
(գործադիր տնօրեն) _____

Գլխավոր հաշվապահ _____ *»:*

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՄԱՐՏ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 19

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 22

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 27

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 28

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 38

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 56

Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների

Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը

Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների

Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության

Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը

Առևտրային բանկերի ավանդներ 67

Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների

Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 69

Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը

ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը

ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը

ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ

Կառավարման վերցված միջոցներ

Պահառության վերցված արժեթղթեր

ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը

Գրավատների ցուցանիշներ

Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ

Վճարահաշվարկային համակարգ 76

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ

ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ

ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների

ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՅՈՒՅԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2015թ. փետրվար*	*2015թ. փետրվարի իրական աճի հինդեքսը 2014թ. փետրվարի նկատմամբ (%)*	*2015թ. մարտ*	*2015թ. մարտի իրական աճի հինդեքսը 2014թ. մարտի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		103.7		102.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	96797.0[1]	108.0[1]	104898.7	104.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	26004.9	104.9	31902.9	105.7
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	11999.1	101.2[1]	22837.7	99.7
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	149351.7	93.6	173009.9	94.7
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	81191.9	105.3	89344.9	102.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	579.6	87.1	602.6	96.9
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	173556[1]	104.7[1,2]	176269[3]	103.4[3,2]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2015 թ.	*Սպառողական գների հինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների հինդեքս*	*Գների հինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների հինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5	100.0	101.5
Փետրվար	99.9	98.4	102.5	99.0
Մարտ	99.9	99.5	100.8	98.9
2015 թ. հունվար - մարտը 2014 թ. հունվար - մարտի համեմատությամբ	105.1	105.4	106.1	103.7

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2013*	*2014*	*2015[4]*	*2015[4]*	*2015[4]*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.9	2.8	2.5	2.5	4.2
Փետրվար	-0.4	-1.2	-0.1	2.4	5.4
Մարտ	0.4	-0.4	-0.1	2.3	5.8
Ապրիլ	-0.1	0.5			
Մայիս	0.0	-0.8			
Հունիս	-0.1	-1.8			
Հուլիս	0.4	-0.9			
Օգոստոս	0.3	0.7			
Սեպտեմբեր	-0.2	0.4			
Հոկտեմբեր	0.3	1.0			
Նոյեմբեր	0.9	1.3			
Դեկտեմբեր	1.1	3.0			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.6	4.6			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	5.8	3.0			

ԳՆԱՁԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԸ [2]

Անվանում	*2015 թ. մարտը 2015 թ. փետրվարի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)[3]*
ՍԳԻ	**99.93**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**99.23**	**-0.38**
Բանջարեղեն և կարտոֆիլ	97.22	-0.16
Հացամթերք	98.49	-0.15
Միրգ	104.10	0.14
Կենդանական և բուսական յուղեր	97.20	-0.08
Մսամթերք	99.17	-0.08
Հրուշակեղեն	103.15	0.04
Ձու	97.89	-0.03
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**101.20**	**0.25**
Հագուստ և գործվածք	105.03	0.13
Կոշկեղեն	104.00	0.06
Դեղամիջոցներ	101.00	0.04
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	99.10	-0.04
Լվացող միջոցներ	102.05	0.03
Ծառայություններ, որից՝	**100.21**	**0.06**
Կենցաղային բնույթի	102.70	0.03
Բուժսպասարկման	101.15	0.03
Տրանսպորտի	99.04	-0.03
Հանրային սննդի	101.54	0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁ[2]

ժամանակաշրջան	2013	2014	2015
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.79	0.17	0.94[4]
Փետրվար	0.21	-0.45	0.21[4]
Մարտ	0.53	0.02	-0.09
Ապրիլ	0.51	0.14	
Մայիս	0.38	0.05	
Հունիս	0.54	-0.19	
Հուլիս	0.09	0.30	
Օգոստոս	0.11	0.81	
Սեպտեմբեր	0.28	1.01	
Հոկտեմբեր	0.29	0.47	
Նոյեմբեր	0.06	0.37	
Դեկտեմբեր	-0.19	1.11	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.63	3.03	3.82[4]
Փետրվար	3.73	2.35	4.45[4]
Մարտ	4.20	1.82	4.40
Ապրիլ	4.71	1.44	
Մայիս	5.30	1.09	
Հունիս	5.50	0.43	
Հուլիս	5.49	0.63	
Օգոստոս	5.70	0.32	
Սեպտեմբեր	5.34	0.47	
Հոկտեմբեր	4.85	1.15	
Նոյեմբեր	4.51	1.46	
Դեկտեմբեր	3.69	2.75	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՁԻ ՆԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[2]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**4.40**
Խոզի միս	0.40
Մածուն	0.20
Թթվասեր	0.20
Պանիր տնական (կովի կաթից)	0.20
Կոնֆետներ	0.20
Նրբերշիկ	0.18
Թխվածքաբլիթ	0.15
Ծառայություններ զբոսաշրջության՝ արտասահմանյան ուղերթ	0.14
Կարամել	0.13
Տավարի միս	0.12
Եփած երշիկ	0.12
Ավտոմեքենա «KIA Cerato»	0.11
Ոսպնյակ	0.11
Ծառայություններ կարճաժամկետ ապրելու համար կահավորված սենյակների վարձակալության հանձնման	0.10
Բենզին	-0.07

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:

[4] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ[1]

Ամվաճում	*2015 թ. հունվար - փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-փետրվարը 2014 թ. հունվար-փետրվարի նկատմամբ (%)*	*2015 թ. հունվար – մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-մարտը 2014 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	163.1	74.8	267.6	76.9
Ներմուծում *(ՍԻՖ)*	429.4	71.4	677.5	69.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	266.3	69.5	409.9	65.4

[1] 2015 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների արտաքին առևտրի ցուցանիշներն ամբողջական չեն՝ պայմանավորված ԵՏՄ երկրների միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների ոչ ամբողջական հավաքագրմամբ, և դրանք հետագայում ենթակա են ճշգրտման:

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2014 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	109863	22614	87248	296746	55779	240967
ԱՄՆ	11378	12270	-892	30986	33389	-2403
Ուկրաինա	1164	1229	-66	4051	3661	390
Ղազախստան	1802	249	1553	4964	684	4281
Գերմանիա	2388	5235	-2846	7183	10315	-3132
Իսպանիա	715	1166	-451	1959	5420	-3461
Ֆրանսիա	1929	1154	775	4980	4315	665
ԱՄԷ	3100	4710	-1610	8125	11991	-3867
Չինաստան	253	9005	-8752	656	18360	-17704
Թուրքիա	424	1447	-1022	710	4465	-3754
Այլ երկրներ	26439	19611	6828	60318	54961	5358
Ընդամենը	**159456**	**78690**	**80766**	**420678**	**203338**	**217340**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2015 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	60987	23889	37098	148993	60099	88894
ԱՄՆ	14235	9139	5096	37828	22591	15236
Ուկրաինա	452	530	-78	1719	1638	81
Ղազախստան	1757	159	1598	3624	427	3196
Գերմանիա	3264	3493	-229	7315	12393	-5078
Իսպանիա	604	1224	-621	1680	3246	-1567
Ֆրանսիա	1388	2482	-1094	4270	4452	-183
ԱՄԷ	1941	2125	-184	5194	5544	-350
Չինաստան	141	4499	-4358	414	10534	-10121
Թուրքիա	177	892	-715	1458	2725	-1267
Այլ երկրներ	28198	13472	14727	60327	42366	17961
Ընդամենը	**113146**	**61906**	**51240**	**272820**	**166017**	**106803**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	99432	16913	82518	263695	44718	218977
ԱՄՆ	8128	3824	4305	21403	10267	11136
Ուկրաինա	1057	975	82	3353	2883	470
Ղազախստան	1333	189	1144	3935	484	3451
Գերմանիա	1639	722	918	4213	2170	2043
Իսպանիա	613	494	120	1615	1034	581
Ֆրանսիա	1430	400	1030	3751	1553	2198
ԱՄԷ	508	693	-185	2693	1957	736
Չինաստան	170	1941	-1771	274	3646	-3372
Թուրքիա	153	282	-129	390	854	-465
Այլ երկրներ	11199	4775	6424	25695	11922	13773
Ընդամենը	**125663**	**31206**	**94457**	**331017**	**81489**	**249528**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	2015 թվական					
	Մարտ			Հունվար – մարտ		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	59403	19689	39714	144350	50036	94314
ԱՄՆ	10438	4938	5500	26393	8419	17974
Ուկրաինա	439	418	21	1705	1301	404
Ղազախստան	1072	158	914	2561	422	2138
Գերմանիա	1373	352	1022	3649	1274	2375
Իսպանիա	512	277	235	1387	698	688
Ֆրանսիա	1175	394	781	3077	1183	1894
ԱՄԷ	421	341	80	1052	815	238
Չինաստան	86	777	-691	199	1772	-1573
Թուրքիա	137	245	-108	379	613	-234
Այլ երկրներ	8906	4628	4278	21591	9972	11619
Ընդամենը	**83961**	**32215**	**51746**	**206342**	**76505**	**129836**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3]

2014	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.4	131.9	131.2	132.0	130.1	128.4	128.9	131.7	134.8	138.2	141.9	138.6
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	221.3	222.4	223.8	225.7	225.4	227.3	230.4	234.3	240.5	245.5	249.8	238.6

2015	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.8	149.4	147.8									
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	243.0	256.2	257.8									


[1] Հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը՝ 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[3] Աճը նշանակում է արժևորում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2014	2015		
	Դ [3]	Հ	Փ	Մ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**1489.4**	**1351.1**	**1260.9**	**1491.5**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.2	6.1	5.5	0.7
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	1483.2	1345.1	1255.4	1490.9

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:
[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:
[3] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[4] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2014	2015		
	Դ [2]	Հ	Փ	Մ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**568.6**	**549.6**	**551.6**	**553.7**
ԱՄՀ վարկ	290.5	282.7	283.3	273.3
ՀՓԻ տեղաբաշխում	127.5	124.0	124.4	121.7
Այլ վարկեր	150.0	142.6	143.4	158.2
Այլ պարտավորություններ	0.7	0.3	0.5	0.5


[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ փոփոխության տեղեկատվական
	վերջնական տեղեկատվական	ընդամենը	կառավարության տեղեկատվական կապիտալացված արժեթղթեր	կառավարության տեղեկատվական երաշխիքային	ՀԻԴ-երի միջոցներ դրամով	ՀԻԴ-երի միջոցներ այլ արժույթով	ընդամենը	
2014								
Դեկտեմբեր	14634	14634	113933	2166	0	674	116772	**-102138**
2015								
Հունվար	14951	14951	133806	1212	0	676	135693	**-120742**
Փետրվար	14283	14283	105337	1525	0	679	107540	**-93258**
Մարտ	14342	14342	215365	1494	0	668	217527	**-203184**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M1** [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2** [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Արտարժութային ավանդներ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2X** [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Փողի բազմապատկիչ** [5]	**Դրամային բազմապատկիչ** [6]
2014										
